



Առողջապահության ոլորտի մասնագետներին ուղղված հաղորդագրություն

Համակարգային ազդեցությամբ և շնչառման ֆտորքվինոլոններ* և արտայի անևրիզմի և շերտազատման ռիսկ

Առողջապահության ոլորտի հարգելի մասնագետներ,

Բայեր ԱԳ ընկերությունը՝ Դեղերի եվրոպական գործակալության և ակադեմիկոս Է. Գաբրիելյանի անվան Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոնի հետ համաձայնեցված, ներկայացնում է արտայի անևրիզմի և շերտազատման՝ համակարգային ազդեցությամբ և շնչառման ֆտորքվինոլոնների կիրառմամբ պայմանավորված ռիսկի վերաբերյալ նոր նախազգուշացման լրացումը:

Ամփոփագիր

- Համակարգային ազդեցությամբ և շնչառման ֆտորքվինոլոնները կարող են մեծացնել արտայի անևրիզմի և շերտազատման ռիսկը, հատկապես՝ տարեցների շրջանում:
- Պացիենտի մոտ արտայի անևրիզմի և շերտազատման ռիսկի առկայության դեպքում ֆտորքվինոլոնները պետք է կիրառել միայն օգուտ-ռիսկ հարաբերակցության մանրակրկիտ գնահատումից և բուժման այլընտրանքային տարբերակների դիտարկումից հետո:
- Արտայի անևրիզմի և շերտազատման նախադրյալ հանդիսացող վիճակները ներառում են անամնեզում անևրիզմի առկայությունը, արտայի՝ նախապես առկա անևրիզմը և շերտազատումը, Մարֆանի համախտանիշը, Էլերս-Դանլոսի համախտանիշի անոթային տեսակը, Տակայասուհի արթերիիտը, հսկա բջիջների արթերիիտը, Բեհչետի հիվանդությունը, զարկերակային գերճնշումը և աթերոսկլերոզը:
- Պացիենտներին պետք է տեղեկացնել արտայի անևրիզմի և շերտազատման ռիսկի մասին, ինչպես նաև՝ հորդորել դիմել անհետաձգելի բուժօգնության՝ որովայնի, կրծքավանդակի և մեջքի հատվածում հանկարծակի սուր ցավեր զգալու դեպքում:

*ՀՀ տարածքում գրանցված են հետևյալ ֆտորքվինոլոնները. Ավելոքս (մոքսիֆլոքսացին) 400 մգ թաղանթապատ դեղահատեր, Ավելոքս 1,6 մգ/մլ լուծույթ կաթիլաներարկման և Ցիպրոբայ (ցիպրոֆլոքսացին) 500մգ թաղանթապատ դեղահատեր:

